Համատեղ գործողությունների ծրագիր
Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության և Հայաստանի Հանրապետության կառավարության միջև միջուկային ու ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի ոլորտում

Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը և Հայաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Մասնակիցներ,

հիմնվելով երկու երկրների՝ զանգվածային ոչնչացման զենքերի չտարածման մասին բազմակողմ պայմանագրերով, որոնց կողմեր են հանդիսանում նրանք, ստանձնած պարտավորությունների կատարման սկզբունքի վրա,

հաշվի առնելով միջուկային և անկայուն նյութերի ու տեխնոլոգիաների ահաբեկչության նպատակներով օգտագործումը կանխելու փոխադարձ ցանկությունը,

նկատի առնելով միջուկային ու ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի հզորությունների մեծացման անհրաժեշտությունը,

հայտնում են հետևյալ մտադրությունները.

Մասնակիցները նախատեսում են համագործակցել միջուկային կամ ռադիոակտիվ նյութերի մաքսանենգ փոխադրումները կանխելու, հայտնաբերելու և այդպիսի միջադեպերին արձագանքելու Հայաստանի Հանրապետության հզորությունները մեծացնելու ուղղությամբ՝ ստորև թվարկվող առաջնահերթ աշխատանքների իրականացման միջոցով: Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախատեսում է ինքնուրույն իրականացնել այն աշխատանքները, որոնց իրականացման հնարավորություններն ունի: Այն դեպքերում, երբ աջակցության կարիք է զգացվում, Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարությունը նախատեսում է ԱՄՆ կառավարության կամ միջազգային հանրության շրջանում փնտրել աղբյուրներ, որ կարող են ցուցաբերել այդպիսի աջակցություն:

Ի. ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄ

Ա. *Կատարված աշխատանքների շարունակում*

- ԱՄՆ միջուկային վերահսկման հանձնաժողովի ու Ատոմային էներգիայի միջազգային գործակալության (ԱԷՄԳ) հետ համակարգված կերպով բարելավել միջուկային վերահսկման/կանոնակարգման համակարգը, վարել ճառագայթային աղբյուրների գրանցամատյան և այն մեծացնել՝ ներառելով նաև միջուկային նյութերը. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի միջուկային և ճառագայթային անվտանգության պետական կարգավորման տեսչություն - ՀՀ պետատոմիսկոդություն)*
- ԱԷՄԳ-ի ու Եվրամիության հետ համակարգված կերպով բարելավել ֆիզիկական անվտանգությունն ու նյութերի հաշվառումը վերահսկելի նյութերի մասով Հայաստանի ատոմային էլեկտրակայանում (ՀԱԷԿ). *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ՀԱԷԿ, ՀՀ պետատոմիսկոդություն)*
- ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի հետ համակարգված կերպով շարունակել միջազգային հանրության կողմից իրականացված ֆիզիկական պաշտպանության բարելավումները «Ռադիոակտիվ թափոնների

վնասազերծում» (Ռադոն) ՓԲԸ-ում, Երևանի «Վ. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության գիտական կենտրոն» ՓԲԸ-ում և «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» ՓԲԸ-ում *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ՀԱԷԿ, ՀՀ պետատոմիսկողություն)*:

Բ. Լրացուցիչ աշխատանքներ

- Կարգավորել կաղրային ներուժի պակասորդը և ոչ համարժեք աշխատավարձերի հարցը Հայպետատոմիսկողությունում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ՀՀ պետատոմիսկողություն)*
- ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Համաշխարհային վտանգի կրճատման նախաձեռնության ու մյուս միջազգային գործընկերների հետ համակարգված կերպով որոնել անտեսված կամ չօգտագործված աղբյուրները և վնասազերծել դրանք՝ միջազգային ստանդարտներին համապատասխան *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ՀՀ պետատոմիսկողություն)*

  ԱՄՆ Պետքարտուղարության Արտահանման վերահսկողության ու սահմանների անվտանգության (ԱՎՍԱ) ծրագրի հետ համակարգված կերպով բարելավել արտահանման վերահսկողության կիրառումն ու ոլորտային իրազեկումը. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Արտահանման վերահսկողության հանձնաժողով, Մաքսային ծառայություն)*

II. ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Ա. Կատարված աշխատանքների շարունակում

ԱՄՆ Էներգետիկայի դեպարտամենտի Պաշտպանության երկրորդ գիծ (ՊԵԳ) ծրագրի, Արտահանման վերահսկողության ու սահմանների անվտանգության (ԱՎՍԱ) ծրագրի ու միջազգային գործընկերների հետ համակարգված կերպով ապահովել ճառագայթային հսկողության սարքավորումներ մնացած անցակետերում և երեք տարի ժամկետով իրականացնել դրանց սպասարկումը և ապահովել լրացուցիչ հայտնաբերման սարքեր ու ուսուցում բոլոր անցակետերում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն/սահմանապահ զորքեր, Մաքսային ծառայություն)*

- ԱՄՆ համապատասխան ծրագրերի և մյուս միջազգային գործընկերների հետ համակարգված կերպով մաքսային ընթացակարգերում արտացոլել արտահանման վերահսկողության ու սահմանների անվտանգության լավագույն միջազգային փորձը. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Մաքսային ծառայություն, Արտահանման վերահսկողության հանձնաժողով)*

Բ. Լրացուցիչ աշխատանքներ

Ամերիկյան ու միջազգային գործընկերների հետ համակարգված կերպով վերհանել ուսուցման առանձնահատուկ կարիքները և հատկացնել համապատասխան հաստիքային ժամանակ, մասնագետներ ու միջոցներ այդ կարիքները հոգալու համար *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն/սահմանապահ զորքեր, Մաքսային ծառայություն, ՀՀ պետատոմիսկողություն)*

ՊԵԳ ծրագրի հետ համակարգված կերպով մշակել ու իրականացնել սպասարկման ու տնական շահագործման ծրագիր՝ սահմանային պաշտպանության տեղակայված սարքավորումների համար. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Մաքսային ծառայություն, Ազգային անվտանգության ծառայություն/սահմանապահ զորքեր)*

Առանձին ուսումնական կենտրոնների, մասնավորապես Սահմանապահ զորքերի, Մաքսային ծառայության ու Ոստիկանության, ուսումնական պլաններում ներառել ուսուցում միջուկային ու ռադիոակտիվ նյութերի հայտնաբերման վերաբերյալ *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն/սահմանապահ զորքեր, Մաքսային ծառայություն, Ոստիկանություն)*

- Աշխատել Վրաստանի սահմանապահ ու մաքսային գործընկերների հետ ընդհանուր սահմանի համակարգումն ու վերահսկումը բարելավելու նպատակով. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն/սահմանապահ զորքեր, Մաքսային ծառայություն)*
- Մեծացնել վերապատրաստված մաքսային պաշտոնյաների ու սահմանապահների թիվը անցակետերում ու սահմանային կանաչ գոտու հատվածում *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն/սահմանապահ զորքեր, Մաքսային ծառայություն)*

Անցակետերի միջև ընկած կանաչ գոտում հսկողության մեծացում՝ պարեկային աշխատանքի ընդլայնման, հավելյալ մեքենաների, սարքավորումների ու ուսուցման ապահովման միջոցով. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն)*

III. ԱՐՁԱԳԱՆՔՈՒՄ

Ա. Կատարված աշխատանքների շարունակում

- Օրենքի ողջ խստությամբ քրեական հետապնդում իրականացնել միջուկային մաքսանենգների հանդեպ. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Գլխավոր դատախազություն, Ազգային անվտանգության ծառայություն, Մաքսային ծառայություն)*
- ԱԷՄԳ-ի Անօրինական փոխադրումների շտեմարանի ծրագրին օպերատիվ հաղորդումներ տրամադրել միջուկային նյութերի մաքսանենգ փոխադրումների կամ պատշաճ կանոնակարգիչ հսկողությունից դուրս ճառագայթային աղբյուրների վերաբերյալ: Սա վերաբերում է անտեսված աղբյուրների հայտնաբերմանը, նյութերի գողությանը, կորստին, վաճառքի փորձին, չարտոնված հեռացմանը/փոխանցմանը/տեղաշարժին և այլն. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ԱԳՆ)*
- Տեղեկատվության փոխանակում Մասնակիցների միջև միջուկային նյութերի մաքսանենգ փոխադրումների միտումների վերաբերյալ, փորձի փոխանակում այս կարգի մաքսանենգության դեմ պայքարի ոլորտում, այդ թվում այսպիսի գործերով իրականացված հետապնդումների արդյունքների մասով. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ԱԳՆ):*
- Ակտիվ մասնակցություն Միջուկային ահաբեկչության դեմ պայքարի համաշխարհային նախաձեռնությանը. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ԱԳՆ)*

Բ. Լրացուցիչ աշխատանքներ

Ամերիկյան ու միջազգային գործընկերների հետ համակարգված կերպով և ըստ Միջուկային փորձաքննության պլանի, որը ներառված է ԱԷՄԳ-ի Միջուկային անվտանգության շարքի փաստաթուղթ թիվ 2-ում, քննության առնել և ըստ անհրաժեշտության փոփոխություններ կատարել միջադեպերի արձագանքման ընթացակարգերում և մշակել արձագանքման ազգային ծրագիր՝ բոլոր տեսակի անօրինական փոխադրումներին արձագանքելու

համար: Սա կներառի անցակետերում և իրավապահ մարմինների հետաքննությունների արդյունքում բացահայտված դեպքերը, ինչպես նաև անտեսված ճառագայթային աղբյուրները. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Ազգային անվտանգության ծառայություն, Գլխավոր դատախազություն, Մաքսային ծառայություն, ՀԱԷԿ, ՀՀ պետատոմիսկողություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայություն)*

- Միջուկային փորձաքննության Հայաստանի Հանրապետության հզորությունների հետագա զարգացում Միջուկային փորձաքննության միջազգային տեխնիկական աշխատանքային խմբին (ITWG) անդամակցելու միջոցով. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ ՀԱԷԿ, ՀՀ պետատոմիսկողություն)*
- Քննության առնել օրենսդրական դաշտը և անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարել, որպեսզի հնարավոր լինի հետապնդում իրականացնել միջուկային մաքսանենգության բոլոր դեպքերով: *(Խնդրին առնչվող գերատեսչություններ. Գլխավոր դատախազություն)*
- Որպես կանխարգելիչ միջոց մաքսանենգության համար դատապարտումների մասին հայտարարություններ ներկայացնել մամուլում: *(Խնդրին առնչվող գերատեսչություններ. Գլխավոր դատախազություն)*

IV. ԿՈՌՈՒՊՑԻԱ

Ա. Կատարված աշխատանքների շարունակում

- Իրավասու գերատեսչությունների կողմից վերհանված կոռուպցիայի դեպքերի հետաքննում ու քրեական հետապնդման իրականացում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Հակակոռուպցիոն խորհուրդ, Գլխավոր դատախազություն):*

Բ. Լրացուցիչ աշխատանքներ

- Կոռուպցիայի հետ կապված ազգային ռազմավարության ընդունում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Հակակոռուպցիոն խորհուրդ)*
- Միջուկային նյութերի մաքսանենգ փոխադրումների դեմ պայքարի համար պատասխանատու բոլոր գերատեսչություններում կոռուպցիայի դեմ պայքարի գերատեսչական պլանների մշակում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Հակակոռուպցիոն խորհուրդ և այլ կառույցներ)*
- Հավելյալ հակակոռուպցիոն ուսուցում, ինչը նաև կներառվի գերատեսչության ուսումնական կենտրոնի ծրագրում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ. Հակակոռուպցիոն խորհուրդ և այլ կառույցներ)*
- Էթիկայի ու վարչական չափանիշների իրականացման նկատմամբ հսկողության ամրապնդում. *(Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Հակակոռուպցիոն խորհուրդ և այլ կառույցներ)*
- Լրացուցիչ աշխատանքներ ուղղված սահմանի հատման ժամանակ կոռուպցիայի հնարավորությունների կրճատմանը, ինչը կարող է ներառել.
    - Կապի ազգային կենտրոնի հիմնում, որտեղ կստացվեն ազդանշաններ ու այլ տվյալներ անցակետերում տեղադրված ճառագայթային հայտնաբերման սարքերից՝ մեծացնելու արձագանքման արդյունավետությունն ու նվազեցնելու կոռուպցիան,

- Ստանդարտացված ռիսկային մոդելների մշակում, որոնցով կսահմանվի, թե սահմանին ինչ պետք է որոնվի: (*Խնդրին առնչվող գերատեսչություններ՝ Հակակոռուպցիոն խորհուրդ և այլ կառույցներ):*

V. Մասնակիցները նախատեսում են սույն Համատեղ գործողությունների ծրագրի ընթացքի վերաբերյալ միմյանց պարբերաբար հաշվետվություններ ներկայացնել:

Սույն Համատեղ գործողությունների ծրագիրՀ հանդիսանում է քաղաքական պայմանավորվածություն Մասնակիցների միջև և իրավականորեն պարտադիր չէ:

Ստորագրվել է Վաշինգտոն քաղաքում, 2008 թվականի հուլիսի 14-ին՝ երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը անգլերեն և հայերեն:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ԿՈՆԴՈԼԻԶԱ ՌԱՅՍ
ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ
ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝

ԷԴՎԱՐԴ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ